

## Ճանապարհ, ժամանակ, արագություն/մաս 3

Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը նրա շարժման արագությունն է:

Արագությունը կարելի է չափել արագաչափի միջոցով:



## Օրինակ`

Կարող ենք ասել.

Ավտոմեքենան շարժվում է ժամում 70 կմ

արագությամբ, կամ ավտոմեքենան շարժվում է 70կմ/ժ արագությամբ:

**Մարմնի շարժման արագությունը** հավասար է նրա

անցած ճանապարհի և ծախսած ժամանակի քանորդին:

## Այսինքն՝

**Արագություն = Ճանապարհ : Ժամանակ**

**Մարմնի անցած ճանապարհը** հավասար է նրա շարժման արագության և ծախսած ժամանակի արտադրյալին:

**Ճանապարհ = Արագություն · Ժամանակ**

**Մարմնի ծախսած ժամանակը** հավասար է նրա անցած ճանապարհի և արագության քանորդին:

**Ժամանակ = Ճանապարհ : Արագություն**

## Խնդիրներ.

1. Գնացքը 9 ժամում միևնույն արագությամբ անցավ 540 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը:
2. Ավտոմեքենան 11 ժամում միևնույն արագությամբ անցավ 770 կմ ճանապարհ՝ առանց

դադարի : Որքա՞ն էր ամտումեքնայի շարժման արագությունը:

3. Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան 7 ժամում, եթե շարժվի 65 կմ/ժ հաստատուն արագությամբ՝ առանց դադարի:
4. Հեծանվորդը 4 ժամում ընթացավ 13 կմ/ժ արագությամբ՝ առանց դադարի: Որքա՞ն ճանապարհ նա անցավ:
5. Նարեի տնից մինչև դպրոց 360 մ է: Նա դպրոց է գնացել 40 մ/ր արագությամբ՝ առանց դադարի : Որքա՞ն ժամանակ նա ծախսեց դպրոց գնալու համար:
6. Սևանից միննույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 9 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին

ավտոմեքենան ժամում անցնում է 75 կմ, իսկ երկրորդը՝ 65 կմ:

7. Աշտարակից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 5 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 55 կմ, իսկ երկրորդը՝ 60 կմ:

8. Բեռնատարը 250 կմ ճանապարհի առաջին 120կմ-ն անցավ 60 կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 65 կմ/ժ արագությամբ: Բեռնատարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

9. Սիրելի սովորողներ, այժմ ինքներդ կազմեք նմանատիպ առաջադրանքներ: